

Օհանյանի «Ավան կրթահամալիրի» ամսաթերթ
Հրատարակվում է 2001թ. ապրիլից (№ 1)

2001
ՎԱՅԻՍ



Օհանյանի «Ավան կրթահամալիրի» հիմնը

/ պարտավոր է իմանալ յուրաքանչյուր վարժարանական/

Գարունները քո սրտում
 թող հավերժ լինեն,
 Մանուկները քո գրկում
 թող միշտ ուրախ ապրեն,
 ԵՎ սաները քո բազում
 թող դառնան միշտ քեզ ապավեն,
 Որ երկինքը քո լազուր
 ամպերը սև չփակեն:

ԿՐԿՆԵՐԳ

Դու ապրիր կրթօջախ իմ
 Միշտ ուրախ ապրիր,
 Շուրթերիդ վրա անվերջ
 Թող երգը թևածի,
 Եվ երգի հնչյուններն այս
 Թող աստղեր դառնան
 ՈՒ կերտեն պայծառ լույսով
 Վառվող քո ապագան:

Թող հավատը քեզ ընկեր.
 զինակից լինի
 ՈՒ սրտում քո երազներ.
 անթիվ հույսեր ծնի,
 Իսկ նոր դարը քեզ համար
 խաղաղություն թող բերի,
 Թող բերի կանաչ ճամփա
 եվ խինդ ու սեր բերի:

ԿՐԿՆԵՐԳ

Դու ապրիր կրթօջախ իմ
 Միշտ ուրախ ապրիր,
 Շուրթերիդ վրա անվերջ
 Թող երգը թևածի,
 Եվ երգի հնչյուններն այս
 Թող աստղեր դառնան
 ՈՒ կերտեն պայծառ լույսով
 Վառվող քո ապագան:

ԽՈՍՔԸ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝
 Ս ՈՒ Ս Ա Ն Ն Ա Բ Ա Ր Ս Ե Ղ Յ Ա Ն Ի

ՍԻՐԵԼԻ ՍԱՆԵՐ

Մեր դպրոց-վարժարանն իր կարճ պատմության ընթացքում բազմաթիվ անակնկալներ է մատուցել, սակայն վարժարանական խորհրդի ամենամսյա թերթը հրատարակելու նախաձեռնությունը ոչ թե պետք է դիտել որպես անսպասելի երևույթ, այլ պարզապես մեր գործերի տրամաբանական շարունակություն: Ավելին, թերթի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում:

Սիրելի սաներ,

Շնորհավորում ենք «ՎԱՐՈՒԺԱՆ» ամսաթերթի անդրանիկ համարի լույս ընծայման առթիվ: Համոզված ենք, որ այն սրբորեն կկատարի իր առջև դրված կրթա-դաստիարակչական խնդրիները: Ինչպես մեր դպրոցը, թերթը նույնպես կունենա յուրահատուկ խորագրեր և կլուսաբանի դպրոցի առօրյան, ավանդույթներն ու ծրագրերը:

Մենք անշափ ուրախանում ենք՝ ծանոթանալով թերթի առաջին համարի բովանդակությանը: Ձգացվում է, որ պարբերականը նախաձեռնել են արդեն ինքնահաստատված, բարձր ունակություններ և գիտելիքներ ունեցող, ինքնուրույնաբար համարձակ որոշումներ կայացնելու կարողություններով օժտված, ինքնանախաձեռնող աշակերտներ: Այս հատկանիշների շնորհիվ յուրովի է բնութագրվում այն բարձր - որակը ու աշակերտի ուժերին ոչ այնքան համապատասխան աշխատանքը, որն անում է թերթի խմբագրական կազմը:

Ցանկանում ենք, որ «ՎԱՐՈՒԺԱՆ»-ը հաջողությամբ լուծի իր առջև դրված դժվարագույն խնդիրները, զուգահեռաբար աջակցի աշակերտների գործնական և կյանքի գիտելիքների մատուցմանը, նրանց ազգային ոգով դաստիարակությանը՝ բարձրացնելու ազգային ոգին:

Որպես կարևորագույն խնդիր՝ թերթը պետք է կարողանա դաստիարակել խիզախ, հանդուգն, վճռական և գործարար մարդուն՝ բնորոշ հոգեբանություն: Այն պետք է աշխատանք տանի հատկապես բարձր դասարանցիների մոտ՝ մեծացնելու ինքնուրույնորեն և արժանապատվորեն հաղթահարելու անձնական դժվարություններն ու հնարավոր սթրեսները:

*Կրթահամալիրի կրթական ծրագրերի ղեկավար
պրոֆ. Սուրեն Օհանյան
Կրթահամալիրի սոցիալական ծրագրերի ղեկավար,
Ավանի առաջին թաղապետ՝ Ռուբեն Հայրապետյան*

ՄԵՐ ԹԵՐԹԻ ԾՆՈՒՆԴՂ

*....Մի ազգ երբեք չի կարող գիտության կատարելության հասնել,
քանի նրա մեջ զարգացած չէ ընթերցանության սերը...
ԲԱՖՅԻ*

Իսկ Պարույր Սևակի կարգախոսը մեզ հիշեցնում է. «Ով անցյալ ունի, չի կարող հիշողություն չունենալ, ով պատմություն ունի, չի կարող հետ չնայել»: Իսկ հայ ժողովուրդը միժտ ինքն է կերտել իր պատմությունը: Եվ ազգային ամեն մի սխրագործություն ստեղծվում է այն ժամանակ, երբ ազգը հավատում է իր վաղվան և ուզում է խոսել վաղվա սերունդների հետ:

Այսօր «Ավան կրթահամալիրը» կայացած է: Արդեն չորրորդ տարին է, ինչ կատարում է ազգանվեր գործ՝ կերտելով իր պատմությունը: Ուրեմն ժամանակն է ունենալու մեր սեփական թերթը՝ գալիք սերունդներին պատմելու վարժարանի բացման, անցած ուղու, հաղթական արշավների ու սխրանքների, ճեպահարցազրույցների ու գեղարվեստական միջոցառումների մասին:

Ուրեմն, սիրելի՛ վարժարանականներ, եկեք ստեղծենք մեր սեփական թերթը՝ անվանելով «ՎԱՐՈՒԺԱՆ» ի պատիվ Վարուժան Կարապետյանի, ում անունով էլ կոչվում է մեր վարժարանական խորհուրդը:

Սիրելի՛ վարժարանական, իսկ թե ո՞վ է Վարուժան Կարապետյանը, կիմանանք նորաստեղծ թերթի այս և հետագա համարներում:

«Ավան կրթահամալիրը» մի առանձին իշխանություն է, որն ունի իր հիմքը, նշանաբանն ու սահմանադրությունը, նախագահը, վարչապետը, վարժարանի ժողովի նախագահը՝ իր գիտության և կրթության, առողջապահության, սպորտի և տուրիզմի, ֆինանսների, արտաքին և ներքին գործերի նախարարներով:

Թերթի համարներում կլուսաբանվեն յուրաքանչյուր կառույցի կատարած աշխատանքները, կտպագրվեն պատանի ստեղծագործողների նյութերը:

Թերթի ստեղծման նախաձեռնողը ես եմ և հայցում եմ մեր վարժարանականների աջակցությունն ու սատարող հավատը:

*ԱՐԵՎԻԿ ՕՂԱՆՅԱՆ
9-րդ դասարան*

Շամազգային երազի խորհրդանիշը

Արդեն տասնվեցերորդ տարին է, որ նա, աշխարհից մեկուսացած, մեն-մենակ, հեծում է ֆրանսիական բանտերում, բայց հայ ժողովուրդը չի մոռանում նրան: Ավելին, որքան ժամանակն անցնում, այնքան վեհանում, դառնում է համայն հայության նվիրական իղծերի մարմնացումը:

Մինչդեռ Վարուժանը շատ սովորական տղա էր, ծնվել էր Սիրիայի Կամիշլի գյուղաքաղաքում, որտեղ նախնիները հաստատվել էին Սասունից բռնազաղթվելուց հետո, որպեսզի իրենց պատմական հայրենիքին բնօրրանին մոտ լինեն: Բնօրրանից, սակայն, նրանց բաժանում էր Թուրքիայի անտական սահմանը: Վարուժանը երկար լսում էր պապի պատմությունները Տավրոսի լեռների, Մարութա վանքի անանց հմայքի մասին ու մի օր չի համբերում, գաղտնի անցնում է սահմանը, հասնում Սասուն: Նա տեսնում է, որ իրենց նահապետական տանը, գյուղում, ամբողջ լեռնաշխարհում օտարներ են ապրում, ապրում են նրանք, ովքեր կոտորել են նախնիներին, արտաքսել հայրենի տաճարներից: Դեռահաս պատանին ընդվզեց այդ անարդարության դեմ և, երբ դպրոցն ավարտելու օրը պապը մի ոսկի տվեց, բոլորից գաղտնի զենք առավ: Արդեն համոզվել էր, որ նախորդ սերունդների աշխարհի բարձրագույն ատյաններին հղած դիմումները, խնդրագրերը, արդարագրերը ոչ մի արդյունքի չեն հասցնում, միջազգային հանրությունը անտարբեր է մնում մեր ողբերգության, անժանկետանց պահանջատիրության նկատմամբ:

Այդ պահից Վարուժանը մերթ ամառաչելի լեռներում էր մերթ աշխարհի շքեղ մայրաքաղաքներում, այնտեղ, որտեղ իր կախիքն զգացվում էր: Նա գինվորացրվել էր պատմական Հայաստանի ազատագրության զինված պայքարին:

1983 թվականի հուլիսի 15-ին ֆրանսիայի ազգային տոնի հաջորդ օրը, Փարիզը զարթնեց աննախադեպ դրդյունից: Օռլիի օդանավակայանում թուրքական օդազնացության ընկերության հաշվառման սեղանի մոտ, ինքնաշեն, հզոր շունք էր պայթել, զոհեր էին եղել, օդանավակայանի շենքի զգալի մասը վերածվել էր փլատակների: Նույն երեկոյան լրագրերը լույս տեսան. «Հայերը մահ են սփռում Օռլիում» խորագրերը: Սկսվեցին ձերբակալությունները և, քանի որ գաղտնի ոստիկանությունը չէր կարողանում բացահայտել բռնապարթի պատասխանատուներին, սպառնաց Թուրքիա, Իրան արտաքսել այդ երկրներից փախած, Ֆրանսիայում ապաստանած վաթսուհից ավելի հայերի, որոնց դժվար չէր պատկերացնելը, թե ունեցնում էին պատիժները կալանավորել:

Իդ անմեղ հայրենակիցների կյանքը փրկելու համար Վարուժան Կարապետյանը ստանձնեց բռնապարթի պատասխանատվությունը: Չմայած Ֆրանսիական դատարանը նրա մեղսակցությունը չապացուցեց, դատապարտեց ցմահ բանտարկության: Վարուժանն իր բանտային երկար տարիների ոչ մի օրը, ոչ մի ժամը գուր չէր վատնել. լեզուներ է սովորել, ազգային պատմությունն ուսումնասիրել, հայրենասիրական կտավներ գեղանկարել, որոնք ցուցադրվել են Հայաստանի տարբեր քաղաքներում, Արցախում, հրացունքի արժանացել: Այժմ էլ փայտափորությամբ է զբաղվում: Սակայն, որքան անցնում են տարիները, այնքան խարխվում է հայ ազատամարտիկի առողջությունը: Դրան նպաստում են հատկապես հոգեկան տառապանքները: Ըստ ֆրանսիական օրենսդրության ցմահ բանտարկության դատապարտված կալանավորը տասնհինգ տարի անց նայմանակետ ազատ արձակման իրավունք ունի: Հայաստանի կառավարությունը պաշտոնապես Վարուժան Կարապետյանին ընդունելու ցանկություն է հայտնել, բայց Ֆրանսիայի արդարադատության նախարարությունն արդեն երրորդ տարին է անորոշ ժամանակով ձգձգում է գործի վերաքննությունը. ըստ երևույթին չի կարողանում դիմագրավել թուրքական սադրանքներին:

Ահա թե ինչու ցմահ բանտարկյալի շուտափույթ ազատ արձակումը համայն հայության առաջնահերթ մտահոգությունն է դարձել, դարձել է ազգային ինքնասիրության, արժանապատվության խնդիր:

Վարուժան Կարապետյանի միակ հույսը Հայաստանի վերականգնված պետականությունն է, համազգային զորակցությունը:

Նա մեր գործոն միջամտությանը սպասում է, մեզ հավատում է: Հուսախափ չանենք նրան:

Ֆրանսիայի Հանրապետության
Նիցնոյի մարզպետարան

18.հոկտեմբերի, 2000թ.
Բ. ԵՐԵՎԱՆ
ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻՎՅԱՆ
/գրող, հրապարակախոս/

ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՏՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՆՏՈՒՄ ...
ԵՎ ԻՐ ԻՍԿ ԱՏԵՂԾԱԾ
ԽՈՐՀՐԴԱՆԻՇԸ ՀԱՅ ՔԱՂ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբեր, 1996, ՍԵՆ-ՄՈՌ ԲԱՆՈ

Չէ, նամակ չես տա կամ էլ տրտունջ, այլ պարզապես զնդանումի անվերջանալի դառն ապրումներ, նույնանման ժամերի, օրերի, ամիսների, տարիների անվերջանալի ապրումներ...

Առանձնության մեն մենակ չորս պատեր, հաստ ճաղերի, փակ դռների կրկնապատկված մի գերություն... Օտարություն... որի տարիների ոտնահետքով մեկը լինում է տասնմեկ, տասնմեկը տասներեք, չի լրանում, նորից նույնն է... Միօրինակություն... Միօրինակություն...

Ձարմանում ես, չես հավատում, այդ ինչպես ես դու դիմանում, երբ հաստածեփ պատերի ծեփը անգամ ցած է ընկնում, ճաք է տալիս, երկաթյա ճաղերը ժանգոտում են, իսկ դու, մարմին, լոկ մի մարմին, դիմանում ես...

Տարիների ոտնահետքով ծմեռը կրկին գարուն է դառնում, գարունը՝ ամառ, իսկ դու աշնան նման ես, մնում ես մշուշոտ ու տերևաթափ... շուրջդ մշուշ, բայց ինքդ հուշ... հիշում ես, հիշում իզուր... երբ կար ժամանակ, որ դու էլ էիր ապրում ազատ... բայց ինչ ազատ: Ազատվածի մի հեգ որդի, մի երեխա անապատի, ամենքի հետ մանուկ սերունդ՝ զրկված մանկությունից... Երբ հասակ առար, երիտասարդ ինքնությունդ, հայրենիքդ որոնեցիր, մաքառեցիր, պայքարեցիր, զենք զրկեցիր, ողջ էությունդ նվիրեցիր, բայց թե ինչու և կամ...

Ո՛ր զիչեր է, ահեղ զիչեր մթասքող զնդանի... անքնություն, մտորումներ անսահման ու անվերջանալի, նույն հարցերի, հարցումների թվարկություն, հետո թնճուկ, միայն թնճուկ... զարմանալի կրկնություն երազների...

Մայրամուտին քառասմբակ սար բարձրացող վայրի երան մտույզների, կովարածը՝ հսկա կուպալը ձեռքին, որ հսկում է տուն վերադարձող մանուկների մի մեծ խմբի... Հրաշադեմ սիրուն, սիրուն, բայց չարաճճի մանուկների մի մեծ խմբի, որոնց մեջ իզուր փորձում ես սևին փնտրել, բայց չես գտնում... Ծրարների նամակների մեջ սպասածդ դեռ չի հասել, կամ կհասնի...

Յուրտ ձմեռ է... Տան մի մեծ սենյակում պապիդ՝ անկողինը է փռված... Մայրդ՝ սև հագուստներով, լացակունած սեղմելով քեզ իր կրծքին, ասում է. «Պապդ մեռավ, լառ, վայ լառ, վայ լառ...»: Բայց դու ուշադրություն չես դարձնում քո մոր ասածներին, այլ ամբողջ էությամբ միտքդ կենտրոնացնում ես միայն մորդ վրա, որ այդ օրը իր կսկիծի և սև լաչակի մեջ այնքան զեղեցիկ էր, որ կարծես թե տիրամայրը երկնքից ցած իջած լիներ...

Առավոտյան երկաթյա դռների ճռոցի հետ բաց ես անում այքերդ ու ինչ որ ցավերից, որ անուն չունի, շնչահեղձ կրծքիդ վրա զգում մի սև կարիծի վազք, որ խայթում է սիրտդ իր թույնով կարոտի... Քեզանից ակամա դու հանկարծ պիտի երգես մի երգ ու նրանով վախդ ու միայնությունդ փարատես... ԵՎ այդ երգը պատահական ինչ-որ մի երգ չէ, այլ քեզ պես, քեզանից հին մի տխուր երգ... Կ Ա Ր Ո Տ Ի Ե Ր Գ...

Գարեգին Նժդեհ

Ժողովրդի պատմությունը դա ժողովրդի հավաքական հիշողությունն է: Եվ այդ հիշողությունը վեր է կանգնած բոլոր անչափերտ ու չափերտավոր անհատների կամքից: Պատմությունը արձանագրում է ամեն ինչ և վաղ թե ուշ ազդարարում է ճշմարտությունը, որը սովորեցնում է բոլորիս, թե որտեղից ենք գալիս, որտեղ ենք գտնվում և ու՞ր ենք գնում:

Հազարամյակների պատմություն ունի հայը: Անցել է նա հրի, սրի ու փոթորիկների միջով ու կարծրացել, ինչպես պողպատ: Եվ սա դարձել է ձեր գոյատևման խորհրդանիշը: Մեծ դարբիններ են կռել այդ պողպատը և այդ մեխերի մեջ՝ Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան): Նա ծնվել է 1886թ. հունվարին Նախիջևանի Գավառի Կղնուտ Գյուղում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Պետերբուրգի հասմլսարանի իրավաբանության բաժին: 1904 թ. նա թողնում է ուսումը ու նետվում հայդուկային պայքարի թուղ: Կարճ ժամանակ անց նրան ուղարկում են Բուլղարիա: Նժդեհը գործունեության այս շրջանում նույնպես անգնահատելի, տիտանական գործ է կատարում: Նա հիմք է դնում մի նոր ուսմունքի, որը կոչված էր հիշեցնելու հայ մարդուն, թե ով է ինքը և ինչպիսին պետք է լինի: 1944 թ. աշնանը Նժդեհը ձերբակալվում է Սոֆիայում և հանձնվում է Բուլղարիա մտած Կարմիր բանակին: Որից հետո տեղափոխվում է Ռուսաստան՝ Վլադիմիրի բանտ, որտեղ էլ վախճանվում է 1955 թ. նոյեմբերին: Եվ հանգչում է Նժդեհը օտար հողի մեջ՝ հեռու հայրենիքից: Անցնում են տասնյակ տարիներ: 1983թ. մի խումբ հայ մարդկանց ջանքերով Նժդեհի սուրբ աճյունը տեղափոխվում է հայրենիք և հողին հանձնվում Գլաժորի Սախտակավոր վանքի բակում, որը դառնում է ուխտատեղի:

ՄԱՅԻՆԱՆ ԱԼԲԵՐՏ
/պատմության ուսուցիչ/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՐԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆԻՆ,
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

Ժողովրդավարության և օրինապաշտության աշխարհի շատ փակ դռներ բացվեցին:

Դրանցից մեկը դեռևս փակ է: Դա Վ ա Ր Ո Ւ Ժ ա ն Կ ա Ր ա պ ե տ յ ա ն ի բանտախուցն է, որի վրա մինչև այսօր ծանրացած կողպեքը վկայում է միջազգային մասշտաբով *օրինականության դաշտում դեռևս եղած կամայականությունների ու օրենքի խտրական կիրառման մասին:*

Չխորանալով Վարուժան Կարապետյանի մեղավորության չափաբաժնի մեջ և դատապարտելով ընդհանրապես ահաբեկչությունը որպես երևույթ՝ հատուկ կարևորում ենք նրա սխրանքը, յուրահատուկ քաջությունը, գիտակցված „մեղավոր,, ճանաչվելու և ինքնակամ „հանցագործի,, դերակատարությամբ հանդես գալու նրա բացառիկ արարքը: Դա չի ավարտվել ծափողջյուններով, այլ տասնյոթ տարվա տաժանափրոջամբ՝ անտրտունջ երկու տարի էլ ավել հալումաշ լինելով:

Երևույթն ավելի խորն է: Ֆրանսիայի կառավարությունը պետք է աջակցի հայ մարդու այս մոլորակի վրա աստծո կամքով ճշմարտացիորեն ապրելու իրավունքին: Հայերն այդ իրավունքը նվաճել են բոլոր ազգերի նկատմամբ ունեցած իրենց բարեհաճ ու քաղաքակիրթ վերաբերմունքով, համաշխարհային քաղաքակրթության մեջ պատմականորեն ունեցած խաղախասիրական լավագույն ավանդույթներով: Ֆրանսիայի ղեկավարությունը պետք է ընդունի, որ իր երկրի օրենքը օրենք չէ, եթե հավասարազոր ուժ չունի բոլոր ազգերի ներկայացուցիչների համար: «Օրենքները բոլորի՝ համար պետք է լինեն նույնիմաստ» /Շառլ Լուի Մոնտեսքյու/:

Թվացյալ բռնարարքի հետևանքների հետ պետք է հաշվի նստել և խնդրին ցուցաբերել զգուշավորություն, չբարդացնել իրադրությունը, որովհետև *Ֆիզիկական ոչնչացման ենթարկված մի ամբողջ ժողովրդի վիրավորված արժանապատվությունը ակնկալում է համաշխարհային հանրության ներողամտությունը:*

ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀ,

Վարուժան Կարապետյանն արդեն սպառել է իր անարդար պատժաժամկետը: Նա չափազանց վատառողջ է և անվերապահորեն ժամ առաջ նրա Հայաստան բերելու խնդիրը դարձել է անհետաձգելի: Անտարբերության անկանխատեսելի հետևանքներից բացի պետք է նկատի ունենալ, որ միջազգային պրակտիկայում պատժի անհիմն երկարացումն ընդունելի չէ: Խնդրում և պահանջում ենք Ձեր բոլոր ջանքերը գործադրել Վարուժան Կարապետյանին շուտափույթ Հայաստան բերելու հարցում: Նրան ազգովի դիմավորումը հավատի լրացուցիչ երաշխիքներ կառաջացնի մեր պետականության կայացման գործում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՎԱՆ ԿՐԹԱԴԱՍՍԱԼԻՐ»-Ի
ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Օհանյանի «ԱՎԱՆ կրթահամալիր»-ից ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ հղած նամակը

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ...

Բարեողջյուններն են հղում Ձեզ մեր երիտասարդ կրթահամալիրի ուսանողները, աշակերտները, դասախոսներն ու ուսուցիչները, որոնք չնայած ֆիզիկապես Ձեր կողքին չեն, բայց հոգով Ձեզ հետ են և պատրաստ են ամեն ինչ անել Ձեզ ազատելու պահանջով և խնդրանքով: Պրոֆեսոր Օհանյանի «Ավան կրթահամալիր»-ի վարժարանական խորհուրդը 17.05.2000թ. կայացած վարժարանական խորհրդի նիստում, որին մասնակցում էին 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարանների բոլոր աշակերտները, միաձայն որոշեցին վարժարանական խորհուրդը անվանակոչել Ձեր անվամբ:

Իսկ ինչպես և երբ ծնվեց այդ ոգեշնչումը...

Այդ օրը վարժարանում ընթանում էին նախազահական ընտրություններ: Ամենաժողովրդական սկզբունքներով ընտրվել էր վարժարանի նախագահ: Ի դեպ, վարժարանի աշակերտները ստեղծել են մի ինքնակառավարվող „առանձին պետություն,, ունեն իրենց սահմանադրությունը, վարժարանական խորհուրդը՝ նախազահով, վարչապետով, նախարարներով: Չայնի իրավունք ունեցող 103 մասնակիցներից ընտրությանը մասնակցեցին 97-ը, և նախագահ ընտրվեց Արծրուն Սամվելյանը:

Նախազահական ընտրություններից հետո հայրենասիրությանը, հատկապես հայ դատին նվիրված հրաշալի երեկոյին՝ հրավիրել էինք մեր սիրելի ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԻՆ:

Մեր վարժարանականների հայրենասիրության խանդավառության ալիքը հասավ իր զագաթնակետին, երբ վարժարանականները ավելի մոտիկից ծանոթացան Ձեր անձնագրի արարքին, Ձեր սխրագործությանը և նպատակադրվեցին իրենց ձայնը հասցնել մինչև Ֆրանսիայի հանրապետության նախագահին: Ձեր արարքը մի բացառիկ օրինակ է մեր օրերում աշակերտներին նորագույն հայրենասիրության ոգով դաստիարակելու համար:

30.05.2000թ.: Երևանի Ավան համայնքի բոլոր դպրոցների շուրջ 500 շրջանավարտների և 100-ից ավելի հյուրերի առջև, ծրագրում «Հայրենասիրական դաս»-ը, պրոֆեսոր Օհանյանի ներկայացմամբ, վարեց գրող պարոն Ջանիկյանը, ներկայացնելով Ձեզ Ձեր անօրինակ սխրանքով: Որից հետո 10-րդ դասարանցի ՍԱՐԻՆԵ ՇԻՐԻՆՅԱՆԸ կարդաց Օհանյանի «Ավան կրթահամալիր»-ի ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ անվան վարժարանական խորհրդի ուղերձը՝ ուղղված ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, ՖՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ և ֆրանսիայի արդարադատության նախարարին:

Միայն պետք է ներկա լինեիք /տա՛ Աստված, որ շուտով գա այդ օրը/, թե ինչպես էին իրենց իսկ մտահղացմամբ գրված բողոք ուղերձները կարդում առաջին դասարանցիները...

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ԿԱՐԱՊԵՏ ՅԱՆ...

Բանտում դուք անցկացրել եք այնքան տարիներ, որքան մեր՝ այս տարվա շրջանավարտներիս տարիքն է, բայց դեռ չգիտենք Ձեր 17 տարվա իմաստալից կյանքի արժեքին կարող ենք համապատասխան ազգային վաստակ ունենալ կյանքում... Ձեր դավանիները արդեն հյուսվում են հայոց պատմության էջերում... Մենք «Ավան կրթահամալիրի» սաներս, Ձեզ մաղթում ենք, որ դադար չառնեն Ձեր պրպտող միտքն ու եռանդուն ոգին, և դուք կտրվեք ստեղծագործական արքնությունից թելադրվող Ձեր հաջորդ հայրենամկեր աշխատանքին:

Փորձեր ճանաչել Ձեզ Դուք պատահմամբ հանճար չե՞ք

Կալիֆորնիայի համալսարանում առաջարկվող այս թեստը կօգնի Ձեզ գնահատելու Ձեր ինտելեկտուալ (ինացական) օժտվածության աստիճանը: Հարկավոր է միայն լուծել մի շարք փոքրիկ խնդիրներ: Ամեն ինչից գատ, դա բավական գրավիչ զբաղմունք է:

1. Պրոֆեսորը պատկույմ է քնելու երեկոյան ժամը 8-ին և զարթուցիչը լարում է առավոտյան ժամը 9-ի վրա: Քանի՞ ժամ հետո նա կարթնանա զարթուցիչի զանգից:
2. Կարո՞ղ է արդյոք տղամարդն ամուսնանալ իր այրու քրոջ հետ:
3. Ավստրալիայում մայիսի 9 լինու՞մ է:
4. Հովիվն ունե՞ր 10 ոչխար: 9-ից բացի մնացածները սատկեցին: Քանի՞ ոչխար մնաց:
5. Դուք ինքնաթիռի օդաչու՞ն եք: Ինքնաթիռը թռչում է Մոսկվայից Հավանա, ընդ որում միջանկյալ վայրէջք է կատարում Ալժիրում: Քանի՞ տարեկան է օդաչուն:
6. Սովորաբար ամիսն ավարտվում է երեսու՞ օրով կամ երեսունմեկով: Տարվա ո՞ր ամսի մեջ կա քսանու՞թ օր:
7. Դուք մտել եք մութ սկուռ, որտեղ կան կերոսինի լամպ և գազի լամպ: Ի՞նչը կվառեք ամենասկզբում:
8. Մի ավտոմեքենա երևանից գնում է Վանաձոր, մյուս ավտոմեքենան՝ Վանաձորից երևան: Երկուսն էլ դուրս են գալիս միաժամանակ: Սակայն երևանից դուրս եկածը երեք անգամ ավելի մեծ արագություն ունի, քան Վանաձորից դուրս եկածը: Իրենց հանդիպման պահին այս մեքենաներից ո՞րն ավելի մոտ կլինի երևանին:
9. Հայր և որդի ավտովթարի ենթարկվեցին: Հայրը հիվանդանոցում մահացավ: Որդուն տարան վիրահատարան: Ներս մտավ վիրաբույժը և տղային ցույց տալով ասաց. «Սա իմ որդին է»: Կարո՞ղ է արդյոք նրա ասածը ճշմարիտ լինել:
10. Հնագետները մետաղադրամ գտան, որի վրա թվագրված էր՝ 35 /մ.թ.ա./: Հնարավո՞ր է արդյոք դա:
11. Քանի՞ տեղից պետք է սղոցել գերանը, որ այն դառնա 12 կտոր:
12. Չեռքերի վրա 10 մատ կա: Քանի՞ մատ կա 10 ձեռքի վրա:
13. Ի՞նչ քանակությամբ էր Նոյը կենդանիների վերցնում իր տապանը:
14. Բժիշկը հիվանդին նշանակել է երեք սրսկում, յուրաքանչյուրը նախորդից կես ժամ հետո: Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի բոլոր սրսկումներն անելու համար:
15. Քանի՞ հատ 9 թվանշան կա՝ գրված 1-ից մինչև 100 թվերի շարքում:
16. Միայնակ գիշերային պահակը մեռել է ցերեկը: Նրան թոշակ կտա՞ն:
17. Սեղանին վառվում են 7 մոմ: Փչեցին և նրանցից 3-ը հանգան: Քանի՞ մոմ մնաց սեղանին:
18. Մոյուսը կշռում է 1 կգ գունարած կես աղյուս: Որքա՞ն է կշռում աղյուսը:
19. Ինչպիսի թվի տակ է նստում նապաստակը անձրևի ժամանակ:
Ստացված՝ արդյունքները հաշվարկեք բանալու օգնությամբ: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար ստանում եք 1 միավոր:
Տվյալ, ինչպես նաև հաջորդ, եստերի պատասխաններն ու արդյունքները կարող եք կարդալ ամսագրի ամենավերջին էջում:

Որքանո՞վ գիտեք աշխարհագրություն

1. Ո՞րն է տեկտոնական ծագման ամենամեծ լիճը:
2. Ի՞նչ անուններ է ունեցել Վանա լիճը հնում :
3. Որո՞նք են ամենատարածված լճերը Հայկական լեռնաշխարհում:
4. Քանի՞ ավազանների են պատկանում Հայկական լեռնաշխարհի գետերը:
5. Ո՞րտեղից է սկիզբ առնում Կուր գետը:
6. Որո՞նք են ներծին ուժերը:
7. Որո՞նք են արտածին ուժերը :
8. Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի կլիման ձևավորող գլխավոր գործոնները:
9. Որտե՞ղ է խոյանում Նեմրուք հրաբխային լեռը:
10. Ի՞նչ զոգավորություններ են հայտնի Արաքս գետի հովտում:

Մալաթյան Գայանե
7-րդ դաս.

9
ԻՍԿ ԴՈՒՔ ՉԻՏԵ՞Ք, ՈՐ...

«Վարդ-ՄԱԼ»

ԿԿԿ

Երբ մարդիկ գրուցում են, խոսքը խոսակցի վրա ազդում է հետևյալ կերպ:
Միմիկական ու պանտոմիմիկական շարժումները (դիմախաղ ու մարմնախաղ) ազդում են, համապատասխանաբար, 55% և 38%-ով, իսկ բառերը՝ ընդամենը 7%-ով:

ԿԿԿ

Մեր զգայարաններից ամենամեծ իրավունքները, բանից պարզվում է, տրված է տեսողությանը, որը երևույթներն ընկալում է 80%-ով: Մյուս զգայարանները միասին բավարարում են մնացած 20%-ով:

ԿԿԿ

Գույները առեւելի նշանակություն ունեն մեր կյանքում և մեծ չափով ազդում են մեր ինքնազգացողության վրա, բանի որ կարևորագույն տեղեկություններ են հաղորդում մեզ շրջապատող աշխարհի մասին: Այդ տեղեկությունների կարևորությունը հաճախ դժվար է գերազնահատել: Ամեն մարդու դուր են գալիս որոշակի գույներ և դրանց համադրությունները: Դրա միջոցով կարելի է պարզել նաև մարդու բնավորության առանձնահատկությունները: Եվ այսպես....

ՍՊԻՏԱԿ. համարվում է իդեալական գույն, երազանքների արտահայտողը: Դուր է գալիս ամենատարբեր բնավորության տեր մարդկանց: Սպիտակ գույնը զուգակցվում է մաքրության, արդարության, անբիծության հետ: Լույսի գույնն է, որը ցրում է խավարը: Միաժամանակ սպիտակը երկիմաստ է: Այն արտահայտում է և՛ լույսի ճառագույն, և՛ սառույցի սառնություն:

Սև. խորհրդանշում է անվստահություն, հոռետեսություն և կյանքից կտրվածություն: Նա, ով նախընտրում է լրիվ սև հագուստը, բացառությամբ նորածնության քմահաճույքների և սգի, իր անձի նկատմամբ բացասական վերաբերմունք ունի, անընդհատ ճնշված է և դժբախտ: Սևը շատ ուժեղ է ազդում մարդու ներաշխարհի վրա: Դիչենք, սևը դա մթության, խավարի գույն է, խավարը ոչիչ է, ոչիչը՝ մահն է:

ԿԱՐՄԻՐ. կարմիրը կրքի գույնն է և գույների մեջ, քերևս, ամենանշանակալին: Ակտիվացնող, առույգացնող ազդեցություն է գործում (կարմիր գույնին նայելիս մկանային լարվածության տոնուսը բարձրանում է, մարդը ձգվում է): Կարմիր գույնի սիրահարները համարձակ են, կամային, սիրում են իշխել: Եթե կարմիր գույնը դուր չի գալիս մարդու, ապա դա խոսում է թերարժեքության զգացողության, մտերմիկ հարաբերությունների ցանկության, հավատարմության և բանավեճերից վախենալու մասին:

ՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ. գործունյա, երազողների և բնազդայնության գույնն է: Զինանիշագիտությունը համարում է ձևականության և երեսպաշտության գույն: Պնդում են նաև, որ այս գույնը նպաստում է մարսողության լավացմանը: Իրենց նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող երեխաները իրենց նկարում են նարնջագույն:

ՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ. նախընտրում են նրանք, ովքեր հաստատում են կանգնած իրենց ոտքերին, պահպանողական են, զնահատում են սովորույթները և ունեն ամուր ընտանիք: Այս գույնը հաճելի չէ նրանց, ովքեր ինքնասեր են, եսասեր, ինքնամոփոփ և պարզունակ:

ԴԵՂԻՆ. այս գույնը սիրողները հետաքրքրասեր են, շատ շփվող և հեշտ հարմարվող: Դճույք են ստանում դուր գալուց: Ում այս գույնը տհաճություն է պատճառում, խոսում է նրա կենտրոնացածության, հոռետեսության և մարդկանց հետ դժվար շփվելու մասին:

ԴԵՂՆԱԿԱՆԱՉԱԿՈՒՆ. մարդատյացների և ցինիկների գույնն է: Դուր է գալիս բռնակալ անհատներին, որոնք ձգտում են իշխել ուրիշներին, իսկ իրենք վախենում են գործել, որպեսզի դժվարին կացության մեջ չընկնեն:

ՍԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ. վկայում է խիստ արտահայտված և սրված զգայունության, հոգեկան հարստության և նրբանկատության մասին: Եթե այս գույնը տհաճություն է պատճառում, բացահայտում է տվյալ ժամանակահատվածում ապրելու ցանկության և մեծ պարտքի զգացման մասին: Սա այն մարդկանց բնորոշ գույնն է, որոնք ծանրաբեռնված են զանազան բարդույթներով:

ԵՐԿՆԱԳՈՒՅՆ. սրա հետ կապվում են հոգեկան բարձ իդեալները և մաքրությունը: Եթե այն սիրելի գույն է, խոսում է մեղամաղձոտության և հաճախակի հանգստի անհրաժեշտության, հավատարմության և սիրո մասին: Այս գույնի նկատմամբ անտարբերությունը խոսում է զգացմունքների թեթևամտորեն վերաբերվելու մասին, որը թողարկվում է հաճելի վարքագծով:

ԿԱՆԱՉ. բնության գույնն է. կյանքի սկիզբը: Ով նախընտրում է այս գույնը, վախենում է ուրիշի ազդեցությունից և փնտրում է ինքնահաստատման միջոցներ: Ով չի սիրում այս գույնը, վախենում է պրոբլեմներից, ճակատագրի շրջադարձներից և տարբեր ծագում ունեցող դժվարություններից:

Շետաքրքիր գլուխկոտորուկներ

Դժմվա տղաների համար

1. Մեր հանրապետությունում կա մի քաղաք, որի բնակիչները սրամիտ ու կատակասեր մարդիկ են, հին սովորույթներին հետևող, օժտված հայկական հյուրասիրությամբ: Այդ քաղաքի նախկին անունը գտնելու համար, եթե ...ամպ, ...թեր, ...կարել, ...զուր, ...մանվել, ...գահ, ...այծ, ...միս, և ...պար բառերի առաջ ավելացնեք մեկական տառ, որտեղ բառերը ստանան նոր իմաստ, ապա ավելացրած տառերը ձեզ ցույց կտան որոնելի քաղաքի անունը:

Այդ ո՞ր քաղաքն է:

2.

| | | | |
|-----|------|------|------|
| նեց | սիս | թե | յին |
| ին | ավա | եվեռ | հյու |
| որբ | ուրտ | այ | հար |

Շախմատի ծին իր քայլով աղյուսակի վրա այնպես շարժեք, որ ցույց տված տառերի միացումից ստացվի մի հարց: Գտնել այդ հարցը և պատասխանել:

3. Այստեղ ցույց տված աշխարհագրական անունների մի տառը փոխելով, կստանաք աշխարհագրական մի այլ անուն.

Ռոստով, Էլրա, Ամուր, Աղլեր, Անգարա, Ուրալ, Աոնո, Տրան, Լենա, Նևա, Զադ, Դվինա, Սուդան, Իսլանդիա, Զոնդ, Նիոն:

4.

| | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|
| 1. | Ե | | | | | |
| 2. | | Ր | | | | |
| 3. | | | Ե | | | |
| 4. | | | | Վ | | |
| 5. | | | | | Ա | |
| 6. | | | | | | Ն |

Աղյուսակի հորիզոնական վանդակներում լրացրեք վեց տառով գրվող հայկական աշխարհագրական այնպիսի վեց անուններ, որոնց յուրաքանչյուր անվան մի տառը զուգադիպի անկյունագծով գրված «Երևան» բառի տառերին:

5. Դուք գիտեք որ երկրագունդն ունի 4 օվկիանոս: Թվարկեք այդ օվկիանոսները՝ մեծից փոքր: Օղերևութաբանները ինչ-որ հինգերորդ, վեցերորդ օվկիանոսների մասին են խոսում:

Այդ ի՞նչ օվկիանոսներ են:

6. Երեք բառերի տառերից կազմեցեք Դյուսիսային կովկասի մի քաղաքի անուն, որն ընկած է Կուրան գետի ափին: Այդ բառերը կազմված են 3 տառից և ունեն հետևյալ նշանակությունները.

Ռազմական պայթուցիկ առարկա

Ազովի ավազանին պատկանող գետ

Երկրի մակերեսի ռելիեֆի ձևերից մեկը

7. Արդյոք հնարավո՞ր է լավ, պարզկա, արևոտ եղանակին ամիսների ընթացքում արևածագը տեսնել միայն մեկ անգամ:

8. Աշակերտական մի խումբ, Դրիմի ծովափում շրջագայելիս, հանդիպեց ծովափնյա մի գեղեցիկ քաղաքի: Աշակերտները տեղավորվեցին այդ քաղաքի մի գեղեցիկ բազայում: Եաշի ժամանակ նրանց մատուցեցին մի ուտելիք, որը կրում էր այդ քաղաքի անունը: Ո՞ր քաղաքն էր դա:

Գլուխկոտորուկների պատասխանները կարող եք կարդալ ամսագրի հաջորդ համարի վերջին էջում



Խնդիրներ և գլուխկոտորուկներ

/Լուծողները կարժանանան մրցանակների/


1.Տասը

Լուցկու տասը հատիկի մոտ դնել և 8 հատիկ այնպես, որ նորից ստացվի տասը:



2.Խեցգետին

Լուցկու հատիկներից պատրաստված խեցգետինը սողում է դեպի վեր: Երեք հատիկ տեղափոխել այնպես, որ նա սողա դեպի վար:



3.Բանալի

Լուցկու տասը հատիկներից պատրաստված լամպում երեք հատիկ տեղափոխել այնպես որ ստացվեն հինգ հավասար եռանկյուններ:



4.Գրառման վերականգնումը

Շոցատետրում գտնված է մի գրառում՝ Յուրաքանչյուր կտորը 49ռ. 36կ. արժողությամբ կտոր մահուդի վաճառքից ստացվել է 7 ռ. 28կ. Պարզվում է, որ այդ գրառման վրա որոշ տեղեր թանաք է թափվել այնպես, որ հնարավոր չէ իմանալ ոչ վաճառված կտորների քանակը, ոչ էլ ստացված գումարի առաջին երեք թվանշանները: Հարց է առաջանում, կարելի՞ է արդյոք պահպանված տավյալներով իմանա վաճառված կտորների քանակը և ամբողջ ստացված գումարը:

5.Ուլքե՞ր են ամուսիններ

Երեք գյուղացի՝ Համազասպը, Անուշավանը և Աշոտը իրենց կանանց՝ Մանյակի, Լուսիկի և Փեփրոնի հետ միասին գնացին շուկա: Ուլքե՞ր են ամուսիններ, մեզ հայտնի չէ: Դա պահանջվում է գտնել հետևյալ տվյալների հիման վրա. այդ վեց հոգուց յուրաքանչյուրն իր գնած ամեն մի իրի համար վճարեց այնքան դրամ, քանի առարկա նա գնել էր: Յուրաքանչյուր տղամարդ 48 դրամ ավելի ծախսեց, քան իր կինը: Բացի այդ Համազասպը 9 առարկա ավելի գնեց, քան Լուսիկը իսկ Անուշավանը՝ 7 առարկա ավելի, քան Մանյակը:

6.Խմբավորել երկուական

Լուցկու տասը հատիկներ դասավորված են մի շարքով: Պահանջվում է լուցկու մի-մի հատիկ տեղափոխելով այդ հատիկները դասավորել խմբերով, այնպես, որ ամեն խմբում լինի երկու հատիկ և ընդամենը լինի 5 զույգ: Ընդ որում, լուցկու յուրաքանչյուր հատիկ տեղափոխելիս պետք է այն անցկացնել ճիշտ երկու հատիկի վրայով (օրինակ, առաջինը դնել չորրորդի մոտ):

7.Ինչքան ջուր կա տակառում

Մի հեքիաթում տերը ծառա վարձելիս նրան փորձում է՝ առաջարկելով հետևյալ խնդիրը:
_ Միա քեզ տակառ, լցրու այն ջրով ճիշտ կեսի չափով, ոչ ավելի և ոչ էլ պակաս: Բայց տես, չափելու համար փայտից, պարանից կամ ուրիշ քանից չօգտվես:
Ծառան կատարեց առաջադրանքը: Ինչպե՞ս այդ արեց:

ХИ!!!ХИ!!!ХИ!!!

/ԱՅՆԿՂՈՒՆԵՐԸ չԵՆ ԲԱՐՁՐԱՆՈՒՄԻ ԽԱՅԵՐԵՆ, ՈՐԱՇՄԱՊԻ ՆԿՐՈՅՆԵՆ ԻՐԵՆՑ ԲՈՒՆ ԻԺԱՍՏԵՐ/

 Новый "тайд" сделает ваше бельё
 безупречно белым, независимо от того,
 какого цвета оно было до стирки

 Бегает чучка берегу моря в шубе.
 Окунется-вылезет, окунется-вылезет.
 Подходит к нему русский:
 - Ты что, чучка, делаешь?
 - Шубу стираю, однако.
 - А что, в спиральной машине не
 получается?
 - Не получается, только голову кружит.

 Один псих другому:
 - Давай я тебе в голову гвоздь забью?
 - Да ты что, а вдруг промажешь?

 Двое спешат на электричку.
 - Сколько осталось до отхода поезда?
 - Десять минут...
 - А по моим часам - пять!
 - Значит ты не успеешь!

 Учитель просит учеников:
 - Встаньте, кто считает себя тупицей.
 После долгой паузы встал Вовочка.
 - Ты в самом деле считаешь себя тупицей?
 - Ну не совсем. Просто как-то неудобно,
 что вы один стоите

 Бармен:
 - У Вас стакан пуст, хотите ещё один?
 Мужчина:
 - А зачем мне 2 пустых стакана?

 Идет людоед. В одной руке несет гроб, в
 другой негра. Из пещеры выскакивают
 дети и кричат:
 - Опять консервы?
 А людоед говорит:
 - Кто не будет есть консервы, тот не
 получит шоколада.

 Журналист берет интервью у нового
 русского, крупного бизнесмена:
 - Как к вам пришли первые деньги?
 - Как вам сказать... Кстати, это ваш
 кошелек?

 ТВ шоу "О, счастливчик". Новый русский
 добрался до последнего вопроса:
 - Кто из перечисленных птиц не строит
 гнезда: дрозд, малиновка, кукушка, фазан?
 Новый русский просит "звонок другу".
 Друг говорит ему: "Кукушка", и НР
 выигрывает миллион. Обмывают они это
 дело, и НР спрашивает кореша, откуда ему
 был известен правильный ответ:
 - Ну ты даешь, братан! Даже дети знают,
 что кукушки живут в часах!

 Адвокат сын приходит к отцу, старому
 адвокату.
 - Папа, поздравь меня. Я выиграл дело
 которое ты не мог выиграть в течение 15
 лет.
 - Прими мои соболезнования, сын.
 - ?
 - Ты только что лишила свою семью
 источника дохода, который позволял
 содержать её все эти 15 лет

 - Девушка, сколько вам лет?
 (кокетливо): - Двадцать девять лет и
 несколько месяцев...
 - Конкретно, сколько месяцев?
 - Четыреста девяносто шесть...

 Малыш красит стену в сумасшедшем доме.
 Подходит псих:
 - Ты крепко за кисточку держишься?
 - Да, - отвечает тот.
 - Ну тогда я лестницу убираю.

 Ругаются двое лысых, один другому:
 - Ты лысее меня.
 Второй:
 - С чего это ты взял? Что у тебя ни волоска,
 что у меня!
 - А у тебя голова больше!

 Жена мужу:
 - Дорогой, глянь-ка в окно, что это за чудак
 в нашем саду?
 - Во-первых, это не чудак, а корова, а во-
 вторых - это не окно, а зеркало.

ԷՄԻՆԵՄ

Հարցազրույց Էմինեմի հետ.

«Սերը մերձավորի նկատմամբ»

-Ի տարբերություն շատերի, ես միշտ ասում եմ այն, ինչ մտածում եմ: Այն, որ ձեր հարևանը արտաքուստ բարեկիրթ է, դեռ չի նշանակում, որ նա ձեզ վերացնելու գաղտնի մտադրություն չունի:

«Սևամորթների և սպիտակամորթների մասին»

-Այո՛, ես սպիտակամորթ եմ, բայց երաժշտությունը, որը ես կատարում եմ, ստեղծել են սևերը, և ես չեմ փորձում դա թաքցնել: Եվ ընդհանրապես, ով որ խոսք կբացի մաշկի գույնի մասին, այսպես ասած, ապտակ կստանա:

«Էմինեմի կյանքն ուսումնասիրել չի կարելի, որովհետև նա չափազանց

կռվարար է:

Վերջերս մի հետաքրքիր դեպք պատահեց ամերիկյան դպրոցներից մեկում: Երիտասարդ ուսուցչուհի՝ Քեյսի Դժոնսոնը (24 տարեկան), որը երաժշտություն էր դասավանդում, երեխաներին հանձնարարեց Էմինեմի կենսագրությունը սովորել: Բայց նրանից հետո, երբ աշակերտներից մեկի ծնողները հայտնեցին, որ իրենց երեխան ինտերնետում «վատ» տեղեկություններ է հայտնաբերել (դուր ինքներդ գիտեք) ոչ ստանդարտ երգչի մասին, դպրոցի ղեկավարությունը խորհուրդ տվեց ուսումնասիրության թեման փակել, որին ուսուցիչը հայտնեց, որ սովորում են ոչ թե Էմինեմի երգերի տեքստերը, որում անպարկեշտ խոսքեր կան, այլ արտիստի կենսագրությունը և ստեղծագործական ուղին: Բայց և այնպես առաջադրանքը չեղյալ հայտարարեցին: Դրանից հետո ուսուցչուհու նուրբ էությունը չդիմացավ և նա լքեց դպրոցը:

Չուլիա Ռոբերթս

«Էրին Բրոկովիչ» ֆիլմի գլխավոր դերակատարման համար Չուլիա Ռոբերթսն ստացել է 20 միլիոն \$: Նա առաջին դերասանուհին է կինոյի պատմության մեջ, ում վճարվել է նման աստղաբաշխական հոնորար: Արական շովինիզմով ներծծված Հոլիվուդում այդ սահմանագիծը գերաստղի համբավ վայելող տղամարդկանց մենաշնորհն էր: Մինչդեռ «Էրին Բրոկովիչի» բերած հասույթը ապացուցեց, որ Չուլիա Ռոբերթսի պես կինը իրավունք ունի ոտք մեկնել տղամարդկանց հետ 52 միլիոն \$ բյուջեով նկարահանված ժապավենը հանդիսասրահից 125 ու կես միլիոն է հավաքել՝ դառնալով Չուլիայի 8-րդ ֆիլմը, որը 100 միլիոնից ավել գումար է բերել:

Այսօր միսս Ռոբերթսը ոչ միայն աշխարհի ամենաթանկ դերասանուհին է, այլև Հոլիվուդի ամենահարուստ կինը, որի կարողությունը կազմում է ավելի քան 128 մլն. \$: Բացի այդ «Փիվլ» հանդեսը նրան ընդգրկեց աշխարհի 50 գեղեցիկների ցանկում:

Ի՞նչ հայտնի դեմք է նկարում պատկերված



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Օհանյանի «Ավան» կրթահամալիրում
Նոր ուսումնական տարվանից.

- Ընդունելություն նախակրթարանում, հենակետային դպրոց-վարժարանի 1-ից 8-րդ դասարաններում և 9-ից 10-րդ *իրավաբանական, տնտեսագիտական, բանասիրական, բժշկական և ֆիզմաթ* խորացված հոսքերով վարժարանային դասարաններում:
- Ըստ դասարանների աշակերտների ընտրություն և տարբերակում, 12-ից 16 աշակերտներով դասարանների համալրում:
- Յուրաքանչյուր հոսքում ոչ ավել քան 6 աշակերտ:
- Ուսման առաջադիմության արդյունքներով /ատեստավորման/ դասարանների տարբերակում:
- Ատեստավորման արդյունքներով բարձր առաջադիմություն ապահովող 4-9 դասարաններում մեկական աշակերտի անվճար ուսուցում և մինչև 2 աշակերտի 50% և 25% ուսման վարձի զեղչի կիրառում:
- Բացառապես բարձր որակավորում ունեցող ստեղծագործ մանկավարժներով ուսումնական գործընթացների կազմակերպում:
- Ուսման բարձր առաջադիմության և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու երաշխավորում:
- Ուսման բոլոր գործընթացների, այդ թվում նաև լրացուցիչ պարապմունքների /դասերից հետո, շաբաթ ու կիրակի, ամառային դասընթացներ, կոնսուլտացիաներ և այլն/ կազմակերպում վարժարանում առանց որևէ լրացուցիչ վարձատրության:
- Դպրոցի շրջանավարտների որակավորումը ավարտվում է 8-րդ դասարանի վկայականով և 10-րդ դասարանի ատեստատով:
- 10-րդ դասարանի ավարտական պետական քննությունների արդյունքներով շրջանավարտները, առանց ընդունելության քննությունների, կարող են ընդունվել պետական հավատարմագրման գործընթացում գտնվող Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարան և Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան /հեռակա բաժին/ ու օգտվել վարձի մինչև 25% զեղչից:
- Դպրոց-վարժարանի կանոնադրության և ՀՀ լիցենզավորման ու հավատարմագրման ծառայության նոր սերնդի աշակերտների կրթության և դաստիարակության պահանջների պարտադիր կիրառում:

ԲԱՅ ԴՈՆԵՐԻ ՄԻԱՄՍՅԱԿ Օհանյանի «ԱՎԱՆ ԿՐԹԱԴՅԱՄԱԼԻՐՈՒՄ»

մայիսի 15-ից մինչև հունիսի 15

1-ից 10-րդ դասարաններ ընդունվել ցանկացող աշակերտները կհանդիպեն կրթահամալիրի սաների և մանկավարժների հետ, ցանկության դեպքում կմասնակցեն դասերին:

Կներկայացվեն առանձնակի *ուճակ և օժտված* երեխաների մրցութային ընդունելության, անվճար ու զեղչ հիմունքներով ուսուցման պայմանները:

5-6 տարեկան երեխաները կցուցակագրվեն նախակրթարանի *էլիտար* խմբում:

9-րդ և 10-րդ դասարանների աշակերտները կկողմնորոշվեն բուհական ժամանակակից մասնագիտացումների հարցում և կընդգրկվեն վարժարանի *տնտեսագիտական, իրավաբանական, բանասիրական, բժշկական և ֆիզմաթ հոսքերում*:

Կքննարկվեն նոր ընդունվող աշակերտների ամառային նախապատրաստական անվճար դասընթացների գրաֆիկները, սեփական տրանսպորտային միջոցներով նրանց փոխադրման հարցերը:

Վարժարանի *շրջանավարտները հարցազրույցով ընդունվում են Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի մասնաճյուղ և Երևանի «Մխիթար Գոշ» միջազգային համալսարան*:

Դիմել՝ Երևան, Չարենցի 1, 3-րդ պետնախագիծ ինստիտուտ, 3-րդ հարկ և Ավան, Իսահակյան թ., թիվ 171 դպրոցի մասնաշենք: Դեռ. 57-50-69, 57-51-45, 57-71-10 և 61-76-83

**«ՄԻՒԹԱՐ ԳՈՇ» ԿՐԹԱՅԱՄԱԼԻՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2001-02 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԱՐՉԱԿՃԱՐՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ, ԱՐՏՈՆՅԱԼ
ԵՎ ԶԵՂՉ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

1. Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի բոլոր տարիներին ընդունված ուսանողների համար սահմանել հետևյալ վարձաչափերը /ԱՄՆ դոլարին համարժեք դրամ/.*

| | մասնագիտացում | Վանածոր, մաս- նաճյուղ /ցերեկային/ | Մոսկվա /հեռակա/ |
|----|--|---|--------------------|
| 1. | ա/ իրավագիտություն | 600 | 400 |
| 2. | բ/ կառավարում, օտար լեզու, մանկավարժու- թյուն և հոգեբանություն, տարրական ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա | 500 | 300 |

- Ծանոթություն-Այս ծրագրով ուսուցման դեպքում զեղչեր և արտոնություններ չեն սահմանվում /բացառությամբ վարժարանի շրջանավարտների/: Ավարտական կուրսում ուսման վարձը ավելանում է 15%-ով:

2. Երևանի «Միութար Գոշ» միջազգային համալսարանի բոլոր տարիներին ընդունված ուսանողների համար, վարձաչափերը /ըստ ուսման բարձր և ցածր առաջադիմության/*. սահմանել հետևյալ տարբերակված .

| | մասնագիտացում | նվազագույն /բարձր առաջ/ | առավելագույն /ցածր առաջ./ |
|----|--|----------------------------|------------------------------|
| 1. | ա/ իրավագիտություն | 300 | 400 |
| 2. | բ/ կառավարում, օտար լեզու, մանկավարժություն և հոգեբանություն, տարրական ուսուցման մանկավարժու- թյուն և մեթոդիկա | 250 | 300 |

* Ծանոթություն- Այլ կարգի արտոնությունները և զեղչերը գործում են առավելագույն վարձավճարի դեպքում այդ թվում նաև վարժարանից ընդունվելու 25% պայմանի և ուսանողի գերազանց առաջադիմության:

3. Օհանյանի «Ավան կրթահամալիրում»

ա/ սովորողների ուսման վարձաչափերը և տարբերակման համակարգը.

- նախակրթարանում. ամսվա վարձավճարը` 20\$\$\$:
 - 1-ից 3-րդ դասարաններում. տարեկան` 200\$:
 - 4-ից 8-րդ դասարաններում. բարձր առաջադիմության դեպքում տարեկան 300\$, իսկ ցածր առաջադիմության դեպքում` 400\$:
 - 9-ից 10-րդ վարժարանային դասարաններում. տարեկան 400\$:
 - ուսման գերազանց առաջադիմության կարգ ձեռք բերելու դեպքում 4-րդից 8-րդ դասարաններում սահմանվում է 25% զեղչ և փոփոխվում է պայմանագիրը:
- բ/ անվճար ուսուցման, զեղչերի և արտոնությունների համակարգը :
- 4-րդից 8-րդ դասարաններում սահմանվում է գերազանց առաջադիմության մեկական անվճար, մեկական 50% ու մեկական 25% ուսման զեղչ հիմունքներով սովորելու իրավունք:

ընդունող հանձնաժողով

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Դուք պատահմամբ հանճար չե՞ք Բանալի

Ծիշտ պատասխաններ.

1. Մեկ ժամից (զարթուցիչը չի տարբերում առավոտ է ,թե՛ երեկո):
2. Չի կարող (քանի որ այրին դա այն կինն է, որի ամուսինը մահացած է):
3. Լինում է :
4. Մնաց 9 ոչխար:
5. Դուք օդաչուն եք (օդաչուն նույնքան տարեկան է, որքան դուք):
6. Բոլոր ամիսների մեջ:
7. Լուցկին:
8. Կգտնվեն հավասար հեռավորության վրա:
9. Այո, եթե վիրաբույժը տղայի մայրն է :
10. Ոչ, հանարավոր չէ: Այն ժամանակ մետաղադրամների վրա չէին գրում պատրաստման քվականը:
11. 11 տեղից:
12. 50:
13. Յուրաքանչյուր տեսակից մի զույգ:
14. 1 ժամ:
15. 20:
16. Ոչ, մեռածին թռչակ չեն տալիս:
17. 7 մոմ (3 հատ հանգած և 4 հատ վառվող):
18. 2 կիլոգրամ:
19. Թաց թփի տակ:

Արդյունքներ.

- 18-19 միավոր: Դուք հանճար եք(!!!!!!!)
- 15-17 միավոր: Ինտելեկտուալ, չափազանց ընդունակ
- 13-14 միավոր: Նորմալ մարդ
- 11-12 միավոր: Շարքային ապուշ
- 9-10 միավոր: Ապուշ կողմնակի երևույթներն էլ հետը
- 6-8 միավոր: Բացարձակ ապուշ
- 4-5 միավոր: Ընդունակ չէ մտածելու
- 0-3 միավոր: Հարկավոր է մեկուսացնել հասարակությունից

Որպես կոնսուլտացիա: Ամերիկյան հետազոտությունների համաձայն՝ զարգացած ինտելեկտը հավացուցված է բիզնեսում: Դա նշանակում է, որ եթե հավաքել եք 18-19 միավոր, ապա օգտակար կլինենք 3-12 միավոր հավաքող մարդկանց համար, որոնք լավ բիզնեսմեններ են:

Որքանո՞վ գիտեք աշխարհագրություն /արդյունքները և պատասխանները/

1. Ուրմիա լիճը
2. Տոսպա լիճ, Բզնունյաց ծով, Ոչտունյաց լիճ
3. Ամենատարածվածներն են տեկտենական, տեկտոնահրաբխային, հրաբխային և սառցադաշտային լճերը
4. Պատկանում են չորս ավազանների՝ Պարսից ծոցի, Կասպից ծովի, Սև ծովի և Ներքին ջրային ավազանների
5. Կուր գետը սկիզբ է առնում Մեծրաց լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լանջերից
6. Ներքին ուժերը մեծացնում են մակերևույթի բարձրությունների և ցածրությունների միջև եղած տարբերությունները
7. Արտածին ուժերը քայքայում, մասնատում են և վերջին հաշվով ցածրացնում լեռները
8. Հայկական լեռնաշխարհի կլիման ձևավորող գլխավոր գորչխոններն են՝
ա. աշխարհագրական դիրքը
բ. մթնոլորտի շրջանառության առանձնահատկությունները
գ. օեղիեֆի բնույթը
9. Մշո դաշտի և Վանա լճի ավազանի ջրածանում խոյանում է Նեմրուք հրաբխային լեռը
10. Արաքս գետի հովտում հայտնի են Բասենի և Միջինարաքսյան գոգավորությունները
Եթե դուք պատասխանել եք 5-ից պակաս հարցերի, ապա ձեզ պետք է ավելի շատ ուսումնասիրել աշխարհագրություն առարկան:
Եթե պատասխանել եք 6-ից ավելի հարցերին ամբողջությամբ, ապա կարելի է ասել, որ դուք աշխարհագրություն առարկան մակերեսորեն չեք սովորել:
Իսկ եթե պատասխանել եք ճիշտ բոլոր հարցերին, ուրեմն ձեզ կարելի է անվանել աշխարհագրությունից բանիմաց մարդ:

«Վարուժան» ամսաթերթը պատրաստ էր հրատարակության, երբ...
...2001թ., ապրիլի 23-ին...

„Մխիթար Գոշ», համալսարանում մեծ շուքով տոնվում էր **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ 115 ԱՄՅԱԿԸ...**

Հոյոց լեզվի և գրականության ուսուցչուհի **ԹԱՄԱՐԱ ՂԱՐԱԳՅՈՉՅԱՆԻ** սցենարով ու ղեկավարությամբ և Օհանյանի «Ավան կրթահամալիրի», թիվ 187 միջնակարգ դպրոցի ու «Մխիթար Գոշ» համալսարանի սաների մասնակցությամբ հանդիսատեսին էր ներկայացվում **ԼԵՌՆԱԴԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԾՎԻ** կենսագրության գրական-երաժշտական մի հրաշալի կոմպոզիցիա...: Հնչում է հաղորդավարի ձայնը.

-... Շարունակվում է **ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ** ազատատենչ ոգու գաղափարների իրականացումը նաև տարագիր հայերի սրտերում: Այսօր **ՆԺԴԵՅԻ** ոգին ապրում է նաև **ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ** էության մեջ, որի անունով էլ կոչվում է մեր վարժարանական խորհուրդը... Հայ քաջորդու համար **ՆԺԴԵԻ**ի պատգամներն ու պատվիրանները կյանքի պայքարի և հայրենասիրության դասեր էին: Նա խիզախորեն իր վրա վերցրեց չկատարված մեղքը՝ փրկելով հայերի կյանքը...:

...Դահլիճը լեփ լեցուն է հյուրերով, սակայն չկան **ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆԸ**, **ՄՈՒՇԵՂ ԼԱԼԱՅԱՆԸ** և մի շարք հարգարժան հյուրեր, որոնց միջոցով պետք է անցկացվեր միջոցառման երկրորդ մասը...

Օհանյանի «Ավան կրթահամալիրի» հայորդիները արժանապատվությամբ երգվում են.

- ...**ԵՍ ՀԱՅ ԵՄ: ԻՄ ԼԵԶՈՒՆ ՀԱՅԵՐԵՆՆ Է: ԻՄ ԵՐԿԻՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ: ՀԱՎԱՏԱՍՔՈՎ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵՄ: ԻՄ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ: ԱԶԳԻՆ, ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՆՎԻՐՈՒՄՍ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՆԺԴԵՀԱԿԱՆ...**

Միջոցառումը ավարտվեց, սակայն երեխաներին ոգևորող և հայրենասիրական շունչ տվող **Զանիկյանը** չեկավ... բոլորն անհանգիստ էին և ներքուստ վիրավորված...

...Սակայն այն պահին, երբ վարուժանականները երդում էին տալիս դահլիճում, **Գրիգոր Զանիկյանը** դիմավորում էր
Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Կ Ա Ր Ա Պ Ե Տ Յ Ա Ն Ի Ն...

Հաջորդ օրը լուրը թնդաց վարժարանով մեկ, և վարժարանականները անհամբեր սպասում են **ՎԱՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ** իրենց կրթօջախում..., որ հավատան, թե ինչպես են իրենց երազները իրականություն դառնում ու շարունակում նոր երազներ տեսնել...

Գարեգին Նժդեհի խրատները

Ով հայրենապաշտ ու գաղափարապաշտ
երիտասարդություն ունի, նա էլ ապագա ունի ...

Երիտասարդություն՝ աշխարհի
անգերազանցելի գեղեցկությունն
ես դու, երբ բարձրանապատակ ես:

Հայ պատանի, աշխատիր,
որ խոսքդ լինի համակ լույս և
ճշմարտություն, կայծակ, որը
զարկելուց առաջ լուսավորում է
առարկաները:

«ԱՎԱՐՈՒԾԱՆ»

Գլխավոր խմբագիր՝
Արևիկ Օհանյան
Դիզայներ՝
Արման Մուրադյան
Տեխնիկական խմբագիր՝
Նելլի Համբարձումյան
խմբագրության հասցեն՝
Ավան, Իսահակյան թաղամաս,
«Ավան» վարժարան
Հեռ. 61-76-83, 57-50-69
Email: oanna@arminfo.com

Տպաքանակ՝ 300
Գինը՝ 100 դրամ

Հանձնված է տպագրության

22.04.2001թ.

ՓՈՐՁԵՔ ԶԵՐ ԲԱՆՍԵ

Երևանի «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»
միջազգային համալսարանի
հրատարակչություն

Ավան համայնքի բոլոր
շրջանավարտներին

Սիրելի՛ շրջանավարտներ...

Վերջին զանգի դողանքն, իրոք, ուրիշ է...
Զեր կյանքի 17-րդ գարունն ազդարարեց կրթության մեջ ու
կյանքում ինքնահաստատման ավարտն և նոր երազների սկիզբը...

Արդեն ավանդույթ է դառնել, որ Ավան համայնքի տվյալ ուսումնական տարվա բոլոր շրջանավարտները բաժանումից առաջ հանդիպեն միմյանց...
Հանդիպեն ու երազեն միասին, չէ՞ որ բոլոր բարի երազները նման են... Ասում են, թե միասին երազելիս բոլոր բարի ու լուսավոր երազները կատարվում են:

Ուրեմն եկեք հանդիպե՛ք ու ծանոթանա՛նք, լինենք համախոհներ, բաժանումից առաջ միանա՛նք, մեկս մյուսիս ոգևորենք ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ և ԱՎԱՆ հիասքանչ համայնքի տիրոջ իրավունքով...

Պետական հավատարմագրման գործընթացում գտնվող Երևանի «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» միջազգային համալսարանի ղեկավարացող և Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի մասնաճյուղի ղեկավարությունը շնորհավորում բոլոր շրջանավարտներին դպրոցն ավարտելու առթիվ և հրավիրում ցերեկույթի: Որի ընթացքում կխաղարկվեն նաև *անվճար ուսուցման երկու* ուղեգրեր՝ «Մխիթար Գոշ» միջազգային համալսարանում սովորելու համար...

ԸՆԴՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՎՈՐԻ՞՞՞

/Շրջանավարտները հրավիրատոմսերը կստանան դպրոցներից/